- 2) 45°
- 3) $66^\circ 30'$
- 4) 90°

- 2) խողովակաշարայինը
- 3) ջրայինը
- 4) ավտոմոբիլայինը

41 Սյունիքի մարզում զուևավոր մետալուրգիայի կենտրոններ են.

- 1) Ալավերդին և Կապանը
- 2) Քաջարանը և Ագարակը
- 3) Ագարակը և Ախթալան
- 4) Քաջարանը և Գորիսը

42 Շիրակի մարզը սահմանակից է.

- 1) Գեղարքունիքի մարզին
- 2) Կոտայքի մարզին
- 3) Տավուշի մարզին
- 4) Արագածոտնի մարզին

43 ԶԶ բնակչության թիվը կազմում է.

- 1) 3.2 միլիոն մարդ
- 2) 2.8 միլիոն մարդ
- 3) 3.8 միլիոն մարդ
- 4) 4.2 միլիոն մարդ

44 Սպառվող-չվերականգնվող էներգետիկ ռեսուրս է.

- 1) քամու էներգիան
- 2) ջրի էներգիան
- 3) վառելիքային հանքային ռեսուրսները
- 4) արեգակնային էներգիան

45 Անտառային ռեսուրսներով հարուստ երկիր է.

36 Տրված «լեռնաշղթա-լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ջանգեգուրի-Աչքասար
- 2) Վայքի-Գոգի
- 3) Բագումի-Թեժ լեռ
- 4) Ջավախքի-Աժդահակ

37 **ՅՅ-ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (-46° C) գրանցվել է.**

- 1) Շիրակի սարահարթում
- 2) Սյունիքի բարձրավանդակում
- 3) Աշոցքի սարահարթում
- 4) Արագած լեռնագանգվածում

38 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում լանդշաֆտներն ունեն վերընթաց գոտիական տարածում:
- 2) ՀՀ-ում մեծ տարածում ունեն լեռնատափաստանային լանդշաֆտները:
- 3) Լեռնաանտառային լանդշաֆտները մեծ տարածում ունեն ՀՀ հրաբխային շրջաններում:
- 4) Արարատյան գոգավորությունում անապատակիսաանապատային գոտին տարածվում է մինչև 1300 մ բարձրությունները:

39 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ-ում ուրբանիզացման մակարդակը կազմում է 50 %:
- 2) ՀՀ երրորդ խոշոր քաղաքը Վանաձորն է:
- 3) ՀՀ մարզերից առավել խտաբնակ են Գեղարքունիքը և Սյունիքը:
- 4) ՀՀ-ում ամենախտաբնակը 1500-2000 մ բարձրության գոտին է:

40 **ՅՅ-ում տրանսպորտի ճյուղ չէ.**

- 1) երկաթուղայինը

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհագրական լայնությունը երկրի մակերևույթի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտած աստիճաններով:
- 2) Խոշոր մասշտաբի քարտեզների խմբի մեջ մտնում են 1: 1000000-ից ավելի մեծ մասշտաբի քարտեզներ:
- 3) Տարբեր քարտեզներից կազմված գիրքը կոչվում է ուրվագծային քարտեզ:
- 4) Քարտեզի և գլոբուսի վրա հասարակածին զուգահեռ տարված երևակայական շրջագծերը կոչվում են միջօրեականներ:

5 Այն հարթավայրը, որը գտնվում է 0-200 մ բացարձակ բարձրության վրա, կոչվում է.

- 1) բարձրավայր
- 2) սարահարթ
- 3) ցածրավայր
- 4) դաշտավայր

6 Օվկիանոսային ջրի հսկայական զանգվածների հորիզոնական տեղափոխությունը կոչվում է.

- 1) ալիք
- 2) տեղատվություն
- 3) օվկիանոսային հոսանք
- 4) մակընթացություն

7 Մթնոլորտում, երկրի մակերևույթից զգալի բարձրության վրա, ջրային մանր կաթիլների կամ սառցաբյուրեղիկների կուտակումը կոչվում է.


- 1) մառախուղ
- 2) ամպ
- 3) մթնոլորտային տեղումներ
- 4) հարաբերական խոնավություն

8 Լեռան ստորոտը գտնվում է օվկիանոսի ափին (0 մ), 45° աշխարհագրական լայնության վրա: Որքա՞ն կլիմի մթնոլորտային ճնշումը նրա գագաթին, 0°C ջերմաստիճանում, եթե լեռան բացարձակ բարձրությունը 4000 մ է.

- 1) 560 մմ
- 2) 360 մմ
- 3) 440 մմ
- 4) 220 մմ

9 Նկարում պատկերված է.

- 1) հորստ
- 2) գրաբեն
- 3) պլատֆորմ
- 4) գեոսինկլինալ



10 Նկարում պատկերվածը ո՞ր կլիմայական գոտուն է բնորոշ.

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջարգացած երկրների տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 2) Ջարգացած երկրների արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- 3) Նոր զարգացող երկրների տնտեսության առաջատար ճյուղը ոչ արտադրական ոլորտն է:
- 4) Նոր զարգացող երկրների արդյունաբերության առաջատար ճյուղը էլեկտրաէներգետիկան է:

33 10 մլն-ից ավելի բնակչություն ունեցող քաղաք է.

- 1) Փարիզը
- 2) Լոնդոնը
- 3) Տոկիոն
- 4) Վաշինգտոնը

34 Ձիթատու տեխնիկական մշակաբույսեր են.

- 1) սոյան և արևածաղիկը
- 2) ցորենը և բրինձը
- 3) վուշը և ծխախոտը
- 4) եգիպտացորենը և շաքարեղեգը

35 Պարսից ծոցի ավազանի գետեր են.

- 1) Տիգրիսը և Եփրատը
- 2) Գալլագետը և Շորոխը
- 3) Կուրը և Եփրատը
- 4) Արաքսը և Կուրը

28 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ոչխարաբուծությունը Արևմտյան Եվրոպայի անասնապահության առաջատար ճյուղն է:
- 2) Բամբակի ցանքատարածությունները առավելապես տարածված են մերձարկտիկական գոտում:
- 3) Հացահատիկային մշակաբույսերին բաժին է ընկնում աշխարհի ցանքատարածությունների կեսից ավելին:
- 4) Խոզաբուծությունը միջազգային մասնագիտացման ճյուղ է Իրանում և Թուրքիայում:

29 Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է.

- 1) Նիգերիայում և Կամերունում
- 2) Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում
- 3) Վրաստանում և Ադրբեջանում
- 4) Չինաստանում և Հնդկաստանում


30 Նշված պետություններից դեպի ծով ելք չունեն.

- 1) Ֆրանսիան և Իսպանիան
- 2) Շվեյցարիան և Իտալիան
- 3) Չեխիան և Ավստրիան
- 4) Հունաստանը և Բուլղարիան

31 Տրված «պետություն-մայրաքաղաք» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Եգիպտոս-Բաղդադ
- 2) Միքիա-Դամասկոս
- 3) Թուրքիա-Ստամբուլ
- 4) Իտալիա-Միլան

- 1) արկտիկական
- 2) անտարկտիկական
- 3) բարեխառն
- 4) հասարակածային



11 Գործող հրաբուխներ են.

- 1) Էտնան և Կրակատաուն
- 2) Արագածը և Էլբրուսը
- 3) Վեզուվը և Մոնբլանը
- 4) Ջոմոլունգման և Կիլիմանջարոն

12 Փիղը և ընծուղտը ապրում են.

- 1) անապատների զոնայում
- 2) սավանաների զոնայում
- 3) տափաստանների զոնայում
- 4) լայնատերև անտառների զոնայում

13 Դա Ատլանտյան օվկիանոսի մաս հանդիսացող ներքին ծով է: Ողողում է երեք աշխարհամասերի ափերը: Այդ ծովն է.

- 1) Կարիբյանը
- 2) Միջերկրականը
- 3) Կարմիրը
- 4) Սևը

14 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անդերը հին լեռներ են:

- 2) Հարավային Ամերիկայում ամենաընդարձակը Բրազիլական սարահարթն է:
- 3) Հարավային Ամերիկայի ամենաջրառատ գետը Օրինոկոն է:
- 4) Հարավային Ամերիկան Անտարկտիդայից բաժանվում է Մագելանի նեղուցով:

15 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մուստոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 2) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:
- 3) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
- 4) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:

16 Տրված «գետ-մայրցամաք» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կոլորադո-Եվրասիա
- 2) Պարանա-Աֆրիկա
- 3) Դնեպր-Հյուսիսային Ամերիկա
- 4) Մուրեյ-Ավստրալիա

17 Տրված «մայրցամաք-լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Աֆրիկա - Ջոնոլունգմա
- 2) Եվրասիա - Ակոնկագուա
- 3) Անտարկտիդա - Վինսոն
- 4) Հարավային Ամերիկա - Մակ-Կինլի

18 Պրերիաները գտնվում են.

- 1) Հարավային Ամերիկայում
- 2) Հյուսիսային Ամերիկայում

24 Երկրում ցորենի ընդհանուր բերքը կազմում է 660000 ցեցտներ, իսկ ցանքատարածությունների մակերեսը՝ 30000 հեկտար: Միջին բերքատվությունը կլիմի.

- 1) 20 g/հա
- 2) 30 g/հա
- 3) 32 g/հա
- 4) 22 g/հա

25 Տրված «ժողովուրդ-կրոն» զույգերից ընտրել սխալը.

- 1) մոնղոլներ-բուդդայականություն
- 2) թուրքեր-քրիստոնեություն
- 3) պարսիկներ-մահմեդականություն
- 4) իտալացիներ-քրիստոնեություն

26 Տրված «պետություն-կառավարման ձև» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սաուդյան Արաբիա-հանրապետություն
- 2) Մեծ Բրիտանիա-միապետություն
- 3) Ճապոնիա-հանրապետություն
- 4) ԱՄՆ-միապետություն

27 Տրված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) ալյումինի արտադրություն-աշխատատար
- 2) պղնձի արտադրություն-հումքատար
- 3) ավտոմեքենաների արտադրություն-ջրատար
- 4) կարի արտադրություն-էներգատար

20 Քարտեզի վրա Մեխիկո քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

21 Այն բնակավայրը, որտեղ հատվում են միևնույն կամ տարբեր տեսակի տրանսպորտային ուղիներ, կոչվում է.

- 1) երկաթուղային կայարան
- 2) տրանսպորտային հանգույց
- 3) մայրուղի
- 4) նավահանգիստ

22 Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը այն մեծ քաղաքի շուրջ, որի հետ նրանք միացած են արտադրական, աշխատանքային և կենցաղային սերտ կապերով, կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ագլոմերացիա
- 3) մեգալոպոլիս
- 4) ուրբանիզացում


23 Այդ երկիրը սահմանադրական միապետություն է: Կղզի պետություն է: Հայտնի է նավթի և բնական գազի հանույթով: Մայրաքաղաքը խոշոր նավահանգիստ է: Այդ երկիրն է.

- 1) Իսպանիան
- 2) Մեծ Բրիտանիան
- 3) Ինդոնեզիան
- 4) Ճապոնիան

- 3) Եվրասիայում
- 4) Ավստրալիայում

19 Քարտեզի վրա Սիցիլիա կղզին ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



20 Քարտեզի վրա Իսպանիա պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

21 Ընդհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիկական և մարդաբանական հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է.


- 1) էթնոս
- 2) լեզվաընտանիք
- 3) ռասա
- 4) ազգ

22 Քաղաքների դերի բարձրացման, դրանցում բնակչության կենտրոնացման ու քաղաքային ապրելակերպի տարածման գործընթացը կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ագլոմերացիա
- 3) տարաբնակեցում
- 4) ուրբանիզացում

19 Քարտեզի վրա Ֆլորիդա թերակղզին ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



15 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
- 2) Ավստրալիայում բացակայում է հասարակածային կլիմայական գոտին:
- 3) Եվրասիայում անապատների բնական զոնան ձևավորվում է արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիներում:
- 4) Հարավային Ամերիկայի մերձարևադարձային կլիմայական գոտում տարածվում է տունդրայի բնական զոնան:

16 Տրված «օվկիանոս-ծով» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հնդկական-Արաբական
- 2) Խաղաղ-Բարենցի
- 3) Ատլանտյան-Օխոտի
- 4) Հյուսիսային Սառուցյալ-Կարիբյան

17 Տրված «մայրցամաք-թերակղզի» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հյուսիսային Ամերիկա-Կամչատկա
- 2) Հարավային Ամերիկա-Սոմալի
- 3) Եվրասիա-Պիրենեյան
- 4) Ավստրալիա-Հնդկաչին

18 Աֆրիկայում գտնվող լեռներն են.

- 1) Ուրալյան և Սկանդինավյան
- 2) Կորդիլիերներ և Անդեր
- 3) Ատլասի և Դրակոնյան
- 4) Կապի և Մեծ Ջրբաժան

23 Դա նյութական արտադրության ճյուղերից է, որն ունի համատարած տեղաբաշխում և զբաղեցնում է ընդարձակ տարածություններ: Մեծ կախվածություն ունի բնական պայմաններից: Արտադրությունն ունի սեզոնային բնույթ: Այդ ճյուղն է.

- 1) բուսաբուծությունը
- 2) անասնապահությունը
- 3) ջրային տրանսպորտը
- 4) վառելիքային արդյունաբերությունը

24 Եթե երկրում տրանսպորտային ուղիների երկարությունը 80000 կմ է, երկրի մակերեսը՝ 40000 կմ², ապա տրանսպորտային ցանցի խտությունը կլինի.

- 1) 5 կմ/կմ²
- 2) 4 կմ/կմ²
- 3) 3 կմ/կմ²
- 4) 2 կմ/կմ²

25 Տրված «ժողովուրդ-լեզվախումբ» զույգերից ընտրել սխալը.

- 1) ռուս-սլավոնական
- 2) պարսիկ-թուրքական
- 3) իտալացի-ռոմանական
- 4) անգլիացի-գերմանական

26 Տրված «պետություն-մայրցամաք» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Եգիպտոս-Եվրասիա
- 2) Բրազիլիա-Հարավային Ամերիկա
- 3) Կանադա-Աֆրիկա
- 4) Ֆրանսիա-Հյուսիսային Ամերիկա

27 Տրված զույգերից ընտրել սխալը.

- 1) բրինձ – հացահատիկային մշակաբույս
- 2) բամբակենի – տեխնիկական մշակաբույս
- 3) լոլիկ – տեխնիկական մշակաբույս
- 4) գարի – հացահատիկային մշակաբույս

28 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության թվով Չինաստանը առաջինն է աշխարհում:
- 2) Յանցզի գետի վրա կառուցվում է աշխարհի ամենախոշոր ՋրէԿը՝ «Երեք կիրճերը»:
- 3) Չինաստանը բրնձի մշակությամբ առաջատար երկիր է:
- 4) Տրանսպորտային ցանցի խտությունը առավել մեծ է Չինաստանի արևմուտքում:

29 Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

- 1) Ռուսաստանին և Ուկրաինային
- 2) Հնդկաստանին և Նիգերիային
- 3) Ֆրանսիային և Իսպանիային
- 4) Գերմանիային և Հունաստանին

11 Բառաբը և շշաճառը աճում են.

- 1) սավանաների զոնայում
- 2) լայնատերև անտառների զոնայում
- 3) փշատերև անտառների զոնայում
- 4) հասարակածային մշտադալար անտառների զոնայում

12 Հասարակածային կլիմայական գոտում տեղումների միջին քանակը կազմում է.

- 1) 250-300 մմ
- 2) 500-1000 մմ
- 3) 2000-3000 մմ
- 4) 5000 մմ-ից ավելի

13 Այդ բնական զոնան տարածված է հիմնականում բարեխառն գոտու հարավում: Կլիման ցամաքային է, ամառը տաք է, ձմեռը՝ ցուրտ: Տարեկան տեղումների միջին քանակը 300-500 մմ է: Տարածված են հումուսով հարուստ սևահողեր, բազմամյա հացազգի խոտաբույսեր: Այդ բնական զոնան է.

- 1) սավանան
- 2) կիսաանապատը
- 3) տունդրան
- 4) տափաստանը

14 Ո՞ր պնդումն է ճիշտ.


- 1) Աֆրիկան ամենատաք մայրցամաքն է:
- 2) Հարավային Ամերիկան ամենաչոր մայրցամաքն է:
- 3) Հյուսիսային Ամերիկան ամենացուրտ մայրցամաքն է:
- 4) Ավստրալիան ամենախոնավ մայրցամաքն է:

8 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը (S) հավասար է 2 մ², իսկ արագությունը (V)՝ 1.5 մ/վրկ: Գետի ջրի ծախսը (Q) կլինի.

- 1) 30 մ³/վրկ
- 2) 3 մ³/վրկ
- 3) 6 մ³/վրկ
- 4) 15 մ³/վրկ

9 Նկարում n°ր տառով է տրված երկրակեղևի գրանիտային շերտը.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



10 Նկարում պատկերված է.

- 1) ցիկլոն
- 2) մուսսոն
- 3) պասսատ
- 4) անտիցիկլոն



30 Դաշնային պետություններ են.

- 1) Ռուսաստանը և Կանադան
- 2) ԱՄՆ-ը և Ֆրանսիան
- 3) Իտալիան և Հնդկաստանը
- 4) Չինաստանը և Ուկրաինան

31 Տրված «պետություն-նավահանգիստ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նիդեռլանդներ-Ռոտտերդամ
- 2) Մեքսիկա-Ռիո դե Ժանեյրո
- 3) Ճապոնիա -Վլադիվոստոկ
- 4) Իտալիա-Մարսել

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ջրային էլեկտրակայանները:
- 2) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերի մեջ ցանքատարածությամբ առաջին տեղը գրավում է եգիպտացորենը:
- 3) Ջարգացած երկրների մեծ մասում գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնաբուծությունն է:
- 4) Համաշխարհային բեռնափոխադրումների մեծ մասը բաժին է ընկնում երկաթուղային տրանսպորտին:

33 100 մլն-ից ավելի բնակչություն ունեցող երկիր է.

- 1) Ճապոնիան
- 2) Կանադան
- 3) Արգենտինան
- 4) Գերմանիան

34 Նավթի հանույթով առաջատար երկրներն են.

- 1) Շվեդիան և Ավստրիան
- 2) Լեհաստանը և Ուկրաինան
- 3) Վրաստանը և Թուրքիան
- 4) Վենեսուելան և Իրանը

35 Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը.

- 1) Մեծ Արարատը
- 2) Սիփանը
- 3) Ջիլոն
- 4) Արագածը

36 Տրված «լճային գոգավորություն-ծագում» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սևանա-սառցադաշտային
- 2) Վանա-տեկտոնահրաբխային
- 3) Քարի-խառնարանային
- 4) Ուրմիա-մնացորդային

37 ԳԳ-ում ամենաշատ տեղումները լինում են.

- 1) Աշոցքի սարահարթում
- 2) Սևանա լճի գոգավորությունում
- 3) Լոռվա սարահարթում
- 4) Արագած լեռնազանգվածում

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկիրն Արեգակին ամենամոտ մոլորակն է:
- 2) Երկրի երևակայական առանցքը թեքված է իր ուղեծրի հարթության նկատմամբ $66^{\circ}30'$ անկյան տակ:
- 3) Հասարակածի երկարությունը 60.000 կմ է:
- 4) Հունիսի 22-ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:

5 Երկրակեղևի պինդ, կայուն, ընդարձակ տեղամասերը, որտեղ ավարտվել են լեռնակազմական պրոցեսները, կոչվում են.

- 1) հարթավայրեր
- 2) հորստեր
- 3) պլատֆորմներ
- 4) գետսինկլինալներ

6 Մթնոլորտի ստորին շերտի վիճակը տվյալ պահին տվյալ վայրում կոչվում է.

- 1) կլիմա
- 2) ցիկլոն
- 3) մառախուղ
- 4) եղանակ

7 Ջրով լցված բնական գոգավորությունը, որը կապ չունի համաշխարհային օվկիանոսի հետ, կոչվում է.


- 1) գետ
- 2) ծով
- 3) ջրամբար
- 4) լիճ

ԹԵՄԱ 2

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ա կետի ազիմուտն է.

- 1) 45°
- 2) 135°
- 3) 315°
- 4) 225°



2 Կետի կողորդինատներն են հս. լ. 30° , արլ. ե. 40° :
Հասարակածից նրա հեռավորությունը կլինի.

- 1) 3330 կմ
- 2) 5000 կմ
- 3) 4400 կմ
- 4) 2200 կմ

3 Ո՞ր մասշտաբն է ամենախոշորը.

- 1) 1 : 200000
- 2) 1 : 80000
- 3) 1 : 400000
- 4) 1 : 1000000

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ տարածքում ռելիեֆի բազմազանություն չի նկատվում:
- 2) ՀՀ-ում չկան ծալքաբեկորավոր լեռներ և միջլեռնային գոգավորություններ:
- 3) ՀՀ մակերևույթի միջին բարձրությունը 1800 մետր է:
- 4) ՀՀ-ում լայն տարածում ունեն դաշտավայրերը:

39 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ բնակչության թվաքանակը 1920-90-ական թթ. անընդհատ նվազել է:
- 2) ՀՀ բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
- 3) ՀՀ-ն ամենախտաբնակ պետությունն է սահմանակից երկրների համեմատությամբ:
- 4) 2001 թ. մարդահամարի տվյալներով ՀՀ բնակչության թիվը կազմում էր 2 մլն մարդ:

40 ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղն է.

- 1) գունավոր մետալուրգիան
- 2) անտառային արդյունաբերությունը
- 3) վառելիքային արդյունաբերությունը
- 4) սև մետալուրգիան

41 Խաղողագործությունը առավել զարգացած է.

- 1) Շիրակի և Լոռվա մարզերում
- 2) Արմավիրի և Արարատի մարզերում
- 3) Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում
- 4) Կոտայքի և Արագածոտնի մարզերում

42 Այլ պետությունների հետ սահման չունեցող ՀՀ մարզն է.

- 1) Վայոց Ձորը
- 2) Լոռին
- 3) Գեղարքունիքը
- 4) Կոտայքը

43 ՀՀ բնակչության միջին խտությունը կազմում է.

- 1) 80 մարդ/ կմ²
- 2) 108 մարդ/ կմ²
- 3) 138 մարդ/ կմ²
- 4) 180 մարդ/ կմ²

44 Վերականգնվող բնական ռեսուրսներ են.

- 1) ջուրը և հողը
- 2) նավթը և ածուխը
- 3) երկաթը և պղինձը
- 4) տուֆը և կրաքարը

ԹԵՍՏ 1-ի ճիշտ պատասխանները

Ա ՍԱԿԱՐԴԱԿ

Բ ՍԱԿԱՐԴԱԿ

Առաջադրանքի համարը	Ճիշտ պատասխանը	Առաջադրանքի համարը	Ճիշտ պատասխանը
1	4	38	3
2	2	39	3
3	3	40	1
4	1	41	2
5	4	42	4
6	3	43	2
7	2	44	1
8	2	45	4
9	2	46	1
10	4	47	2
11	1	48	1
12	2	49	4
13	2	50	4
14	2		
15	4		
16	4		
17	3		
18	2		
19	3		
20	3		
21	3		
22	4		
23	1		
24	4		
25	2		
26	2		
27	3		
28	4		
29	2		
30	1		
31	1		
32	3		
33	1		
34	4		
35	1		
36	2		
37	4		

Առաջադրանքի համարը	Ճիշտ պատասխանը
5 1	3
5 2	4
5 3	2
5 4	1
5 5	4
5 6	4
5 7	2
5 8	4
5 9	3
60	4
61	1
62	4
63	3
64	4
65	1
66	3
67	2
68	1
69	2
70	4
71	4
72	1
73	2
74	3
75	3
76	31
77	1200
78	15
79	400
80	70

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Նրա երկարությունը 80 կմ է. (77-78 առաջադրանքներ)

77 Որոշել գետի անկումը:

78 Որոշել գետի թեքությունը:

Երկրի բնակչության թիվը 20 մլն է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 14 մլն, երկրի մակերեսը կազմում է 50 հազ. կմ². (79-80 առաջադրանքներ)

79 Որոշել բնակչության միջին խտությունը:

80 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

45 Սետաղային հանքային ռեսուրսներով հարուստ երկիր է.

- 1) Գերմանիան
- 2) Ճապոնիան
- 3) Մեծ Բրիտանիան
- 4) Կանադան

46 Ո՞ր պետության տարածքը կարող է կրճատվել գլոբալ տաքացման հետևանքով.

- 1) Նիդեռլանդներ
- 2) Թուրքմենստան
- 3) Չադ
- 4) Հունգարիա

47 Անապատացման երևույթը հետևանք է.


- 1) միայն մարդու տնտեսական գործունեության
- 2) բնական և անտրոպոգեն գործոնների համատեղ ներգործության
- 3) միայն բնական գործոնների ազդեցության
- 4) միայն տարերային աղետների ազդեցության

48 Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք օգտագործվում կամ կարող են օգտագործվել մարդու կողմից, կոչվում են.

- 1) բնական ռեսուրսներ
- 2) բնական պայմաններ
- 3) կլիմայական պայմաններ
- 4) ռելիեֆ

49 Քարտեզի վրա Գեղամա լեռները ո՞ր տառով են նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ




Ա 50 Քարտեզի վրա Կապան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը


75 Ո՞ր մշակաբույսի տարածման շրջաններն են պատկերված նկարում.

- 1) արևածաղիկ
- 2) շաքարի ճակնդեղ
- 3) բամբակենի
- 4) ցորեն



76 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. $35^{\circ} 30'$ և արմ. երկ. 80° : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ին:

- 2) հասարակածային
- 3) մերձհասարակածային
- 4) արևադարձային



Բ ՄԱԿԱՐԴԱԿ

51 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գեկտեմբերի 22-ին հասարակածում գիշերահավասար է:
- 2) Հայաստանի Հանրապետությունը գտնվում է երկրորդ ժամային գոտում:
- 3) Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 4) Հունիսի 22-ին հարավային բևեռում բևեռային ցերեկ է:

52 Հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս 135⁰ ազիմուտը.

- 1) հյուսիս- արևմուտքը
- 2) հյուսիս- արևելքը
- 3) հարավը
- 4) հարավ- արևելքը

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Վոլգա գետն ունի սառցադաշտային սնում:
- 2) Տեղատվությունը օվկիանոսի ջրի մակարդակի իջեցման երևույթն է:
- 3) Օվկիանոսային հոսանքներն առաջանում են օվկիանոսի հատակում տեղի ունեցող երկրաշարժից:
- 4) Երկրագնդի ամենախորը լիճը Տանգանիկան է:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդումը.

- 1) տայգա - 400-600 մմ- մայրի, խեժափիճի

- 2) անապատներ – 300-400 մմ- օշինդր, կակտուս
- 3) տափաստան - 600-700 մմ- շյուղախոտ, սիզախոտ
- 4) տունդրա - 200 – 300 մմ- կաղնի, բոխի

55 Այդ կլիմայի տիպը բնորոշ է մերձարևադարձային գոտուն: Ամառը չոր է ու շոգ, ձմեռը՝ մեղմ և խոնավ: Կլիմայի այդ տիպն է.

- 1) մուսսոնային
- 2) ցամաքային
- 3) ծովային
- 4) միջերկրածովյան

56 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 2) Եվրասիայում ամենամեծ տարածում ունի խոնավ հասարակածային անտառների գոնան:
- 3) Ցիկլոնը մթնոլորտային բարձր ճնշման մարզ է:
- 4) Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտում արևմուտքից արևելք կլիմայի ցամաքայնությունը մեծանում է:

57 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սկանդինավյան և Ուրալյան լեռները մտնում են Ալպ- Հիմալայան գեոսինկլինալի կազմի մեջ:

- 1) Դեբեդը և Հախումը
- 2) Որոտանը և Մասրիկը
- 3) Ազատը և Հրազդանը
- 4) Դեբեդը և Ողջին

71 Զրաէներգետիկ ռեսուրսներով առավել հարուստ երկրներ են.

- 1) Եգիպտոսը և Ղազախստանը
- 2) Ուկրաինան և Լեհաստանը
- 3) Հունգարիան և Թուրքմենստանը
- 4) Նորվեգիան և Տաջիկստանը

72 Զակաէրոզիոն միջոցառում է.

- 1) անտառապատումը
- 2) լեռնալանջերի երկայնակի հերկումը
- 3) ոռոգումը
- 4) անտառահատումը

73 Բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված նշված միջոցառումներից որի՞ համար են նախ և առաջ անհրաժեշտ աշխարհագրական գիտելիքները.

- 1) ռեսուրսախնայող տեխնոլոգիաների մշակման
- 2) շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ազդեցության կանխատեսման
- 3) բնապահպանական օրենսդրության կատարելագործման
- 4) համապատասխան չափով տուգանքների սահմանման

74 Զարավային Ամերիկայի քարտեզի վրա ո՞ր կլիմայական գոտին է նշված թիվ 2-ով.

- 1) մերձարևադարձային

- 4) 1 - ա, 2 - դ, 3 - գ, 4 - բ

67 Հայաստանի սննդի արդյունաբերության զարգացմանը առավել նպաստել է.

- 1) որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը
- 2) տեղական գյուղատնտեսական հումքի առկայությունը
- 3) երկրի աշխարհագրական դիրքը
- 4) հողային ռեսուրսների առկայությունը

68 Ընտրել նշված էլեկտրակայանների ճիշտ շարքը՝ ըստ նրանց հզորությունների նվազման.

- 1) Հրագրանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Հայկական ԱԷԿ, Երևանի ՋԷԿ, Գյումուշի ՋրԷԿ:
- 2) Հրագրանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ, Գյումուշի ՋրԷԿ, Հայկական ԱԷԿ:
- 3) Հրագրանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ, Հայկական ԱԷԿ, Գյումուշի ՋրԷԿ:
- 4) Հայկական ԱԷԿ, Գյումուշի ՋրԷԿ, Հրագրանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ:

69 Ի՞նչն ընդհանուր չէ Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համար.

- 1) Գերիշխում է լեռնատափաստանային լանդշաֆտը:
- 2) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 3) Չզալի տարածում ունեն ռելիեֆի հրաբխային ձևերը:
- 4) Բուսաբուծության մասնագիտացման ճյուղ է հացահատիկի մշակությունը:

70 Դ՞՞ առավել աղտոտված գետերն են.

- 2) Եվրասիայի որոշ տեղամասեր մտել են Գոնդվանայի կազմի մեջ:
- 3) Հայաստանի Հանրապետության տարածքը ընկած է պլատֆորմի վրա:
- 4) Պլատֆորմները երկրակեղևի անկայուն և շարժուն տեղամասերն են:

58 Ո՞ր պնդումն է սխալ.


- 1) Տափաստանների բնական զոնան հիմնականում ձևավորվում է բարեխառն կլիմայական գոտում:
- 2) Տունդրայի բնական զոնան հիմնականում ձևավորվում է մերձարկտիկական կլիմայական գոտում:
- 3) Աֆրիկայում բացակայում է բարեխառն գոտու անտառների զոնան:
- 4) Անապատների և կիսաանապատների բնական զոնան հիմնականում ձևավորվում է մերձհասարակածային կլիմայական գոտում:

59 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պղնձածուլական կոմբինատները տեղաբաշխվում են ջրի աղբյուրների մոտ:
- 2) Ծանր մեքենաշինության ձեռնարկությունները տեղաբաշխվում են խոշոր գիտական կենտրոնների մոտ:
- 3) Ալյումինի ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են էժան էլեկտրաէներգիայի աղբյուրների մոտ:
- 4) Սարքաշինական ձեռնարկությունները տեղաբաշխվում են մետալուրգիական բազաների մոտ:

60 Սեռատարիքային այս բուրգը բնորոշ է.

- 1) Իտալիային
- 2) Ֆրանսիային
- 3) Ռուսաստանին
- 4) Իրանին



61 Այդ պետությունը տարածքի մեծությամբ դասվում է գերխոշոր պետությունների շարքին: Անտառային ռեսուրսները սակավ են: Համարվում է զարգացած երկիր: Արտահանության մեջ գերակշռում են հանքային հումքը և գյուղատնտեսական մթերքները: Այդ երկիրն է.

- 1) Ավստրալիան
- 2) Կանադան
- 3) Բրազիլիան
- 4) Չինաստանը

62 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Քաղաքային ագլոմերացիաները քաղաքային տարաբնակեցման ցրված ձևեր են:
- 2) Ռասաները միմյանցից տարբերվում են մարդկանց թվաքանակով, լեզվով և մշակույթով:
- 3) Մի ազգի մեջ մյուսի ձուլումը նրա լեզուն, մշակույթը և ազգային սովորույթները յուրացնելու միջոցով կոչվում է ազգային համախմբում:
- 4) Գյուղական տարաբնակեցման ցրված ձևը առավելապես տարածված է Ավստրալիայում, Կանադայում:

63 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Վուշը բարեխառն գոտու սակավ ջերմասեր բույս է:
- 2) Թեյի համաշխարհային բերքի կեսից ավելին ապահովում են Ասիայի երկրները:
- 3) Կաթնատու տավարաբուծությունը զարգացած է բարեխառն և մերձարևադարձային գոտիների տափաստաններում:

4) Մաքրդատու ոչխարաբուծությունը զարգացած է բավարար խոնավություն և համեմատաբար մեղմ կլիմա ունեցող շրջաններում:

64 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարակից շրջանների նկատմամբ ունի բարձր դիրք:
- 2) Ցայտուն է արտահայտված երիտասարդ հրաբխականությունը:
- 3) Լավ է արտահայտված վերընթաց գոտիականությունը:
- 4) Գերիշխող է լեռնաանտառային լանդշաֆտը:

65 Տրված «ՀՀ լանդշաֆտային գոտի-բացարձակ բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) անապատակիսաանապատային-800-1400մ
- 2) լեռնատափաստանային-1400-1800մ
- 3) լեռնաանտառային-1800-2500մ
- 4) մերձալպյան և ալպյան-2500-3000մ

66 Ընտրել գետերի և ջրամբարների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|-------------|---------------|
| 1. Որոտան | ա. Կեչուտ |
| 2. Արփա | բ. Ապարան |
| 3. Քասախ | գ. Սպանդարյան |
| 4. Ախուրյան | դ. Ախուրյան |
- 1) 1 - ա, 2 - բ, 3 - գ, 4 - դ
 - 2) 1 - գ, 2 - ա, 3 - դ, 4 - բ
 - 3) 1 - գ, 2 - ա, 3 - բ, 4 - դ